թը։ Առաջինը այս հարցով զբաղուեց A. Baschet*), որ գրում է.

«Չկայ ոչինչ աւելի ստոյգ, քան մանրամասնութիւններից շատը, որ նա պատմում է կամ որոնց մասին նա յիշում է։ Վենետիկի Տրիէստի հիւպատոս Մարկ Մոնտիի կողմից նրան ցոյց տրուած բարեհաճ ընդունելութիւնը. վերջինիս առաջարկութիւնը տալ Կազանովային խիստ փափուկ ու նուրբ մի յանձնարարութիւն, որ վերաբերում էր հայ վարդապետներին, որոնք հեռացել էին Վենետիկից եւ որոշել էին Տրիէստում հաստատել հայկական տպարան, որ շատ վնասակար էր համարւում Վենետիկի հանրապետութեան շահերի համար, եւ, վերջապէս, այդ առթիւ Ինկուիզիտորների եւ հիւպատոսի միջեւ ծագած գրագրութիւնը»...

«Զափազանց ձանձրալի կը լինէր,— շարունակում է Բաշէն,— այդ վաւերագրի թարգմանութիւնը եւ նրանց թուումն իսկ հագիւ թէ որեւէ հետաքրքրութիւն ներկայացնէ։ Ասենք միայն, որ 1773 թ. Հոկտ. 27-ին, առաջին զեկուցագրից սկսած մինչեւ 1774 թ. Սեպտ. 18-ը, Կազանովայի Վենետիկ վերադառնալու օրը, թուով 19 աւելի կամ պակաս ընդարձակ զեկուցումներ են գրուած»։

Համարեա 40 տարի յետոյ, Կազանովայի հայերի մասին գրածներով զբաղուեց Տրիէստի ԺԸ. դարի պատմութիւնը ուսումնասիրող Կարլո Կուրիէլը, իր երկու աշխատութիւնների մէջ, Trieste Settecentesca, Palermo, 1922 եւ La Fondazione della Colonia Armena in Trieste (Archeografo Triestino, 1930)։

Վերջին աշխատութեան մէջ Կուրիէլը մանրակրկիտ քննութեան է ենթարկել Կազանովայի զեկուցագրերը եւ օգտագործել է Վիեննայի Մխիթարեանների այս հարցին վերաբերուող թէ բանաւոր բացատրութիւնները եւ թէ նրանց հաղորդած դիւանական տուեալները։

Օգտուելով այդ տուեալներից, այլ եւ Հ. Հ. Կապպելլիտտիի, Թէոտորեանի եւ Ակինեանի արդէն յիշուած գրուածքների տուած տեղեկութիւններից ես կը ջանամ ներկայացնել Մխիթարեան միաբանութիւնների բաժանման եւ Տրիէստի միաբանութեան հիմնադրութեան, ապա Վիեննա փոխադրուելու պատմութիւնը։

Դժբախտաբար, Կուրիէլը իր աշխատութիւնների մէջ չի յիշել, որ Կազանովայի 1774 թ. 14 Յուլիս եւ 26 Օգոստոս զեկուցագրերը արդէն տպել է Bazzoni-ն*), ապա նրա բոլոր զեկուցագրերը արուել են Կազանովայի յուշերի մի հրատարակութեան մէջ, իբրեւ յաւելուած**)։ Չունենալով իմ տրամադրութեան տակ Կազանովայի զեկուցագրերի ամբողջական բնագիրը՝ ես ստիպուած եղայ հետեւել Կուրիէլին, որի ուշադրութեան գլխաւոր առարկան Կազանովան է եւ ոչ թէ հայերը։ Իսկ երբ զեկուցագրերի բնագիրն ընկաւ ձեռքս, իմ աշխատութիւնն արդէն պատրաստ էր։ Ամբողջ գրքուածքը նոր վերամշակութեան ենթարկելու քաջութիւնը չունենալով՝ ես, այնուամենայնիւ, Կուրիէլի քաղած մասերի մէջ Կազանովայի զեկուցագրերից մտցրի այդ ամէնը, որ ինձ թուաց արժէքաւոր։

* * *

Մխիթարեան միաբանութեան հիմնադրութիւնը Պոլսում անցաւ մեծ դժուարութեամբ, որովհետեւ ե՛ւ տեղը, ե՛ւ ժամանակը բնաւ չէին համապատասխանում Մխիթարի առաջադրած նպատակներին։ Կ. Պոլսի հայ ազգաբնակութիւնը բաղկացած էր երկու խմբից։ Մնայուն բնակչութիւնը, որ վաղուց ի վեր ապրում էր այնտեղ, հաշւում էր 80,000 հոգի, կամ մօտաւորապէս այդքան։ Դրանք մեծ մասամբ այն ընտանիքներն էին, որ հաստատուել էին Պոլսում դեռ բիւզանդական կայսրների ժամանակ, մասամբ էլ վերջը եկած։ Թուրքական նուաճումից յետոյ, կամենալով թուլացնել յոյների ազդեցութիւնը, սուլթանները աշխատում էին Պոլիսը բնակեցնել հայերով՝ տրամադրելով նրանց յոյների եկեղեցիները եւ նոյնիսկ ամբողջ յունական թաղեր։ Ինչպէս պատկերաւոր ոճով ասում է Երեմիա Չէլէբին իր «Ստամպոլոյ Պատ-

*) A. Baschet, Autenticiti de Memoiry de Y. Casanova (Le Livre, 1881 p. p. 48-49)։

*) Bazzoni, Le Annotazioni degli Inquisitori di Stato di Venezia, Nuovo Archivo Veneto, 1870, T. XI, p. p. 56—63.

**) J. Casanova, Historia della mia Fuga. Milano, 1911.